ՀՀ ք.ԵՐԵՎԱՆ
«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ» ԱԿ ՓԲԸ

РА г.ЕРЕВАН
ЗАО ЦЗ "НОР АРАБКИР"

"NOR-ARABKIR" HEALTH CENTER CLOSED J-S COMPANY

ք.Երևան-12 Հ.Քոչարի 21
Հեռ.. 26-24-16

г.Ереван -12 Г.Кочара 21
Тел. 26-24-16

**11,03,2022թ.**
**N 039/464**

**ԷՖ ԲԻ ԷՅ ՍՊԸ**
**Տնօրեն՝ Է. ՓՈԹՈՅԱՆԻՆ**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին**

<<Նոր Արաբկիր>> ԱԿ ՓԲԸ-ի և << ԷՖ ԲԻ ԷՅ >> ՍՊԸ-ի միջև կնքված 27.12.2021թ. N9 «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/3»* ծածկագրով պայմանագրի և 10□01.2022թ. N1 «ՆԱԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/3»* համաձայնագրին համապատասխան Ձեր կողմից մատակարարվել է «Գլյուկոմետրի թեստ-երիզներ N50»: Համաձայն ՀՀ կառավարության << Գնումների գործընթացի կազմակերպման կարգի մասին>> 04. 05. 2017թ. N526-Ն որոշման պոլիկլինիկայի բուժանձնակազմի և տվյալ չափաբաժնով գնային առաջարկ ներկայացված մասնակցի հետ միասին կատարվել է տվյալ ապրանքի տեխնիկական բնութագրի ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ Ձեր կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում հրավերի տեխնիկական բնութագրին: Համաձայն հրավերի <<Տուփը բացելուց հետո թեստ երիզների պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս քան 9 ամիս>>, Ձեր կողմից մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է << Տուփը բացելուց հետո թեստ երիզների պիտանելիության ժամկետը 3 ամիս>>:

Ձեզ տրամադրվել է ժամանակ մի քանի անգամ տալ պարզաբանում կամ կատարել դեղորայիք փոփոխություն, սակայն ոչ մի արձագանք չի եղել:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

**Տնօրեն** **Վ. Հակոբյան**